

«Մեղուն» մի տարի է եղել ամենօրեայ, իսկ

Անգլիացիները Մահմադէի ջրանցքի վրա կամարը շինեցին իրանց արտիլերիան տեղափոխելու համար: Կամարը գտնվում է Սիդի-Գաբերի հանգեպ և պահպանվում է անգլիական զորքերով: Արաբի-փաշա նոյնպէս մի նոր ամրութիւն կազմեց վեց թշնամիներով զինաւորված եզրիտ-իբրահիմի մօտ: Զինաւորված զնացքը ամեն օր հետախուզութիւններ է անում երբեմն Մեքքի և երբեմն Մեկլահի ուղղութեամբ: Կապիտան Ֆիշերը չափազանց շատ է աշխատում: Ամեն տեղ թշնամին հրացաններ է արձակում զինաւորված զնացքի վրա: Իսահիլ-փաշա հրաժարվեցաւ առաջին միսիստրին պաշտօնից: Եւրօպացիների կարծիքով, իրազ-փաշա կը կազմի նոր միսիստրութիւն: Կայրէից փախում են շատ բէյեր և միսնում են խեղդիկ հետ: Ամենը հաւատացած են, որ իրազ-փաշայից լաւ ոչ ոք չէ կարող նպաստել երկրի խաղաղեցնելուն: Արդէն հասել են Ալէքսանդրիա Կոնստանտինոպոլ, Ուելսէյ և Էդի գետերը: Եւրօպացիները և անգլիական միսիստր-նախագահ Մեքքա: Սուէզի ջրանցքի վրա նաւազնացութիւնը ապահով չէ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի: Այսօր հրատարակվեցաւ Միջին-Ասիական բամբակի ընկերութեան կանոնադրութիւնը պայելով Մորօզովի, Բարինովի, Կոնչինի և Լաւովի Միջին Ասիայի բամբակի արդիւնաբերութեան դարգացման համար: Կրամազուելը 300,000 ռուբլ է:

ՆԻՎՈԼԱՅԵՎ, 14 օգոստոսի: Քաղաքային վարչութիւնը որոշեց 1,500 ռ. Ալէքսանդրեան զինաւորային զուգընթաց դասատուներ բանաւրու համար:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒՍՎ, 14 օգոստոսի: Գետերալ Գուրկովին այստեղ սպասում են օգոստոսի 22-ին:

ՎՈԼՈՎՅԱ, 14 օգոստոսի: Վելսիի գաւառի մէջ անտառային հրդեհները մեծ չափերի են հասել:

ՎՇԱԿԻՆ, 14 օգոստոսի: Գետերալ Գուրկովին այստեղ սպասում են օգոստոսի 22-ին:

«Մշակը» հինգ տարի, իսկ դուք համեմատում էք մի տարի միայն: Կրանից ոչինչ հետեանք չէ կարելի դուրս բերել: Թանաջանների միմեանց կողքին հաւաքելը, միմեանց մօտ դասաւորելը մի օր և է խորհուրդ պէտք է ունենայ, այնպէս չէ: Գուր ասում էք որ 1881 թվին «Մշակը» դուրս է բերել 244 համար, իսկ «Մեղուն» 275 համար: Կրանով ինչ էք ուզում ցոյց տալ, որ «Մեղուն» աւելի զործունեայ է եղել, աւելի շատ համարներ է դուրս բերել, այնպէս չէ: Բայց համեմատել կարելի է հաւասարը հաւասարի հետ, օրինակի համար նոյն դիւրեմի, նոյն մեծութեամբ, նոյնքան նիւթ պարունակող թերթեր միմեանց մէջ: «Մշակն» ու «Մեղուն» մի և նոյն մեծութեան թղթի վրա են տպվում, մի և նոյն քանակութեամբ նիւթ են պարունակում, «Մեղուն» մի համար և «Մշակի» մի համար կազմելու համար նոյնքան ոյծ, նոյնքան փանք է հարկաւոր գործ դնել, իսկ «Մշակի» և «Մեղունի» կէս թերթ կազմելու համար ամբողջ թերթի նիւթից կէսը չափ նիւթ պէտք է պատրաստել, ամբողջ թերթի վրա գործ դրած ոյծից է փանքից կէսը պէտք է գործ դնել: Իսկ յայտնի է որ «Մշակը» 1881 թվին 244 ամբողջ թերթ է դուրս բերել, իսկ «Մեղուն» կիրակի օրերը նոյն տարվայ ընթացքում կէս թերթ էր դուրս բերում: Ուրեմն ձեր ցոյց տուած 275 թերթ պէտք է հանել գոն 25 թերթ: Եւ այն ժամանակ կը յայտնվի, որ 1881 թվին «Մեղուն» 250 թերթ է դուրս բերել, իսկ «Մշակը» 244, ուրեմն չը նայելով որ առաջինը 6 անգամ շաբաթ էր հրատարակվում, իսկ վերջինը 5 անգամ, առաջինի դուրս բերած համարների թիւը ամբողջ տարվայ մէջ 6 համարով միայն աւելի է քան թէ «Մշակի» դուրս բերած համարների թիւը և ոչ թէ 31 համարով: Ուրեմն թանաջանները իրանց նպատակին չեն հասնում:

ՆՈՎՈՐՈՒՆ, 14 օգոստոսի: Թագադրութեան համար նահանգի գեղական հասարակութիւնները նահանգապետը կընտրի հինգ տանուտերերին:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒՍՎ, 14 օգոստոսի: Լրագրական լուրը գաղթականներին էլսիկի գաւառի զորքերի հորերից բռնի հեռացնելու մասին ճիշդ չէ:

ՆԻՎՈԼ-ՆՈՎՈՐՈՒՆ, 14 օգոստոսի: Յուրիստի առեւտրը հանդարտ է: Առաջին տեսակները մաս մաս 14 ռ. 25 կ., 14 ռ. 75 կ., մանր 15 ռ., երրորդ տեսակները 11 ռ. 75 կ., 12 ռ. 25 կ., երրորդ տեսակը 9 ռ. 50 կ., 9 ռ. 75 կ.: Առաջինը 8 ռ. 50 կ., պօղրուկայնայ 7 ռ. 15 կ.: Սերբերի ցորենի ցանկացողները քիչ են: Գետերը ընկնում են:

ԱՌԵՆԻ, 14 օգոստոսի: Ծովային միսիստրը արդեւից նաւատորմի մէջ ծառայողների արձակուրդները: Պահեստի օֆիցերները և ուսուցիչները ծառայութեան են հրաւիրված:

ՎԻԵՆԱ, 14 օգոստոսի: Աւստրո-ունգարական միսիստր Կալայ հասաւ Ֆոշա: Հերցեգովինայի ապստամբները առաջնորդ Ֆարգարդ յայտնեց իշխանութեանը, թէ ինքը անձնատուր է լինում: Միսիստրը աւստրիական կայսրի անունով նրան ներումն խոստացաւ:

ԲԵՐԼԻՆ, 14 օգոստոսի: Վիլհելմ կայսրը ընդունեց գվարդիայի զօրաբաժնի հրամանատար Աւգուստ Վերտմաներգեան իշխանի հրաժարականը:

ՓԱՐԻՅ, 14 օգոստոսի: Գեղին գլբի հրատարակելը յետաձգված է: Երեք օր է, որ Մարսելի մէջ կառապանները դադարացրել են աշխատանքները:

Կ. ՊՈԼԻՍ, 14 օգոստոսի: Սերբայի մէջ հանգստութիւն է:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՍ, 14 օգոստոսի, Արաբի ամրացաւ Գեղեվալիսի մօտ: Անգլիացիները կուռով գրաւեցին Էլ-Մակֆարտ ամրարտակը: Նգրպտացիները 10,000 էին, անգլիացիները 1,500 էին:

Գուր բաժանում էք առաջնորդող յօդուածները տեսակների վրա. աղգային, հասարակական և քաղաքական բովանդակութեամբ: Ստատիստիկայի մէջ չէ կարելի ունենալ անձնական հայեացքներ: Դորեւորում մեր լրագրում տպված «Նգրպտական խնդիր և թիւրքաց հայեր» վերնագրով յօդուածը գուր, դիցուք, կը համարէք աղգային խնդիր վրա յօդուած, որովհետեւ մենք այնտեղ խոսում ենք զինաւորապէս այն բանի մասին թէ ինչ աղգեցութիւն կուենայ եգիպտական խնդրը և Ալէքսանդրիայի ութբակովութիւնը թիւրքաց հայերի գրութեան վրա. իսկ մենք համարում ենք նոյն յօդուածը, դիցուք, քաղաքական:

Գուր ասում էք. «Մշակի» նամակներից Ռուսաստանից եղել է 357 հատ, իսկ արտասահմանից 159 հատ: Կրանով ուղում էք ցոյց տալ այն կամ այն երկրի մասնակցութեան չափը մեր լրագրին, այնպէս չէ: Եթէ այդպէս է, նոյն 1881 թվին ընթացքում «Ռուսաստանի» բաժնում տրված լրագրութիւն յօդուածներ «Նամակ թիւրքայից», «Նամակ Ս. Պետերբուրգից», «Նամակ Դամասկոսից» և այլն վերնագրով, նոյնպէս ցոյց են տալիս Ռուսաստանի կամ արտասահմանի մեր լրագրին մասնակցելու չափը, թէ կուզ նրանք բանասիրական են էլ լինէին, թէ և նրանց մէջ կային և քաղաքական և հասարակական բովանդակութեամբ յօդուածներ, որոնք զինաւորապէս իրանց մեծութեան պատճառով գետնաշինքն բանասիրական բաժնում: Այնու ամենայնիւ նրանք ցոյց են տալիս Ռուսաստանի և արտասահմանի մասնակցութեան չափը մեր լրագրին. բայց դուք բանասիրական յօդուածների բաժնում: Ուրեմն այդ թանաջաններն էլ իրանց նպատակին չեն հասնում: Գուր ասում էք որ «Մեղուն» առաջնորդող յօդուածների թիւը եղել է 1881 թվին 180 հատ,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի: Նշանակված են. գետերալ-մայոր Նազովովի Օգէսայի զինուորական շրջանի շտաբի կառավարիչ, իշխան Զէյն Վիդեհնշտէյն Բերլեբուրգ Տուրկեստանի զինաւոր-նահանգապետի կարգադրութեան տակ: Բարձրագոյն թոյլ է տուած կոմ Պավել Անդրէեւիչ Եուվալովին իշխան Վօրոնցովների ցեղի ժառանգական կայքերի ժառանգ հաստատութեայ յետոյ օրինական կանոններով անուանվել պայծառախալ իշխան Վօրոնցով կոմ Եուվալով: Ռուսաց տեխնիկական ընկերութեան Մօսկվայի մէջ կայանալի ժողովի կանոնները հրատարակված են: Ժողովը լի-նելու է օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին: Ժողովը երկու շաբաթ կը տեւի, կը նախագահէ իշխան Կօլոբուրով, փոխ-նախագահ՝ Կօլուբէյ: Բարձրագոյն թոյլ է տուած ամբողջ կայսրութեան մէջ նուիրատուութիւններ հաւաքել Ղարսի մէջ սուրբ Միքայէլ անունով մայր-եկեղեցի կառուցանելու համար: «Новое Время» լրագիրը հաղորդում է. ճանապարհների հաղորդակցութեան միսիստրութիւնը առանձին վարչութիւն կունենայ «ճանապարհների հաղորդակցութեան միսիստրութեան ուսումնական բաժին» անունով «Учебный отделъ министерства путей сообщения»: Բաժնի կառավարիչ նշանակվում է Գելլա-Վոսա: «Новости» լրագիրը հաղորդում է. Հարց է յարուցված պետական ծառայութեան իրաւունքներ տալու մասին քաղաքային հասարակական բանկերի մէջ ծառայող մի քանի անձանց:

ՓԱՐԻՅ, 14 օգոստոսի: Պաշտօնապէս հերքվում են լուրերը, իբր թէ Ֆրանսիան առիթ է փնտռում Սերբայի գործերին միջամտելու համար: «National» լրագիրը հաստատում է այն լուրը, որ Ֆրանսիական պատգամաւորների ժողովի պարագլուխները սկսվելուց յետոյ կը պահանջվի վերականգնել օրէնքը ցուցակներով պատգամաւորներին ընտրելու մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 օգոստոսի: «Новое

Время» լրագիրը հաղորդում է, որ սրբա-գան սինօդը վաւերացրել է արքեպիսկոպոսների միջանի տեղափոխութիւնները: «Голосъ» լրագիրը լսել է, որ մամուլի մասին ժամանակաւոր կանոնները ոչինչ փոփոխութիւններ չեն ենթարկվի: Նախագծված է նրանց լրացնել հետեւեալ կերպով. 1) ներքին գործերի միսիստրին նոր իրաւունքներ են տրվում: Երրորդ նախագաւառութիւնը յետոյ չը դադարեցնելով հրատարակութիւնը, պարտաւորեցնել խմբագրութեանը լրագրի համարները ուղարկել ցենզուրային մասնաժողովը և 2) բացի տպագրական գործերի մասին վարչութիւնից հաստատվում է բարձրագոյն մասնաժողով չորս անդամներից. ներքին գործերի, ժողովրդական լուսաւորութեան, արդարութեան միսիստրներից և Սինօդի օրեր-պրօկուրօրից: Ներքին գործերի միսիստրը մասնաժողովին առաջարկութիւն է անում հրատարակութեան դադարման մասին: Բարձրագոյն մասնաժողովի որոշմամբ դադարեցրած հրատարակութեան խմբագիրը ընդ միշտ գրվում է իրաւունքից մի բան հրատարակել: Լուր է տարածված, որ այդ նախագիծը կը ներկայացնվի միսիստրների մասնաժողովին: «Новости» լրագիրը հաղորդում է. ենթադրված է Արեւմտեան Սերբիայի մէջ առանձին վարչութիւններ կազմել պետական կայքերի համար Տօբօլսի և Տօմսկի նահանգների մէջ: Լուրեր են տարածված, որ ենթադրված է նահանգապետներին իրաւունք տալ ժամանակաւորապէս փակել խմբագրի տները, երբ առանձին հանգամանքներով այդ անհրաժեշտ կը լինի: «Српска» լրագիրը հաղորդում է. Նովոգրիվով և Բելեվ քաղաքների մէջ բացվում են հասարակական բանկեր 10—25 հազար ռուբլ զրամաղխով:

ՄԻՋԱԶԳՍՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի: «Голосъ» լրագիրը օգոստոսի 13-ից հաղորդում է. Խարկովի համալսարանի խորհուրդը քննում է հոգաբարձուի առաջարկութիւնը թէ ինչի համար պէտք է գործածել տեխնօլոգիական

ՄԻՋԱԶԳՍՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Կիցուք մի վիճակագրող կամենում է իմանալ մեր Անգլիկական տաղաքաւորութեան երեք աղգերից՝ որի մօտ որդեմուտեան ոյծը աւելի մեծ է, — հայերի, վրացիների թէ թուրքերի մօտ: Այդ նպատակին հասնելու համար նա չը պէտք է հաշուի միմիայն հայ, վրացի և թուրք ընտանիքների մէջ կենդանի մնացող երեխաներին, բայց նրանց մօտ ծնվող երեխաների ամբողջ թիւը, թէ կենդանի մնացողներին և թէ մինչև յայտնի հասակը մեռնողներին: Բայց եթէ այս կամ այն աղու-թեան մէջ, օրինակ հայերի մէջ, կենդանի մնացող երեխաների թիւը, համեմատաբար, աւելի շատ է լինում քան թէ դիցուք թուրք ընտանիքներում, դա չէ վերաբերվում որդեմուտեան ոյծին, այլ անտեսական, առողջապահական, կամ այլ աջող պայմաններին:

Նոյնպէս եթէ ուղում էք հաշուել լրագրի յօդուածների թիւը այն նպատակով որ ցոյց տաք թէ իրան խմբագրութեան և թէ այլ տեղերի լրագրին մասնակցելու չափը, պէտք է հաշուել ոչ թէ միայն կենդանի մնացած, բայց և մեռած յօդուածները: Հասկացաք թէ ոչ: Եթէ ոչ, ոչինչ հետեւեալ չէ կարելի դուրս բերել ձեր ստատիստիկայից: Վերջապէս ինչքան ծանր էլ լինէր թանաջաններ հաշուելու աշխատանքը, բայց վերս բերած բոլոր դատողութիւններից հետեւում է որ այդ տեսակ աշխատանք ամբողջապէս ապարդիւն է լինում, որովհետեւ նրանից ոչինչ ճիշդ բան չէ կարելի դուրս բերել: Իսկ ստատիստիկան ճիշդ գիտութիւն է:

Բայց ցեֆրանների հետ էլ պէտք է իմանալ վարվել:

Ամեն մարդ որ թանաջաններ հաւաքում է, նա զեռ չէ կարող անուանվել վիճակագրող:

ինստիտուտի համար կառուցված շինությունները: Շտեմպելի մասին դատավճարի դեմ բողոք է յայտնված: Գործը նորից կը քննվի կազանի զինուորական դատարանի մէջ: Ֆինանսների մինիստր վերադարձաւ Ս. Պետերբուրգ: Սկսած պինի անյուստի բանկի գլխավոր պարտատէրերն են Տուլայի, Բիաղանի և Տամբովի նահանգների վանքերը: Հոգեւոր վարչութիւններին պատուիրած է այսուհետեւ վանքերի և եկեղեցիների գումարները մասնաւոր բանկերին չը յանձնել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագրի մէջ հրատարակված է, որ կոմս Պավել Անդրեւիչ Զուբովին, վարձեցովների ժառանգական կայքերի ժառանգին, բարձրագոյն թոյլ է տուած անուանվել պայծառափայլ իշխան Վարձեցով: Կոմս Զուբովի: Օգոստոսի 12-ին հաստատված են կանոնները տեխնիկական ընկերութեան Մոսկովայի մէջ, որ կը կայանայ կամ օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին: Մոսկովայի լրագրները հաղորդում են, որ «Русский Курьер» լրագրի աշխատակցի վրա, որ գրում էր Կուկուշկին անունով, երկու մարդ յարձակեցան և այնպիսի հարուած հասցրին գլխին, որ պատուէցին նրա գլխարկը: Դոկտոր Բոտ, համոզվելով կանանց բժշկական կուրսերի օգտաւէտութեան մէջ, նրանց մասին գեղարուցում կազմեց գերմանական կայսրուհու համար: Ս. Պետերբուրգի գուման յայտնեց պատերազմական մինիստրին, որ կանանց բժշկական կուրսերի ընդունելութիւնների դադարեցնելը հակասում է մինիստրութեան կողմից քաղաքին յայտնած համաձայնութեանը կուրսերը մի տարի էլ առաջվայ դրութեան մէջ թողնել մինչև հիւանդանոցների քաղաքի ձեռքն անցնելը նրան թոյլ չը տայ իր իշխանութեան տակ առնել կանանց բժշկական կուրսերը: «Русский Инвалид» լրագրի մէջ կարդում ենք, որ գլխավոր շտաբի մէջ ծառայող զենեւաւոր մայոր Նալոյսկի Օրէստայի զինուորական շրջանի շտաբի գլխավոր է նշանակված:

ԼՆՆՈՒՆ, 14 օգոստոսի: Տեղեկարարի վերջնական մասին լուրը հնարված է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 օգոստոսի: Նիկոլաեւի երկաթուղու սուբհանգակ գնացքը կլինա կայարանի մօտ իջաւ գծից օգոստոսի 13-ին: Վերադարձները 9 են: Ասում են, որ մամուլի կանոնադրութեան մէջ մտցնելի լրացուցիչ յօդուածների հիման վրա երրորդ նախագրութեանից յետոյ մինիստրը կարող է առանց դադարեցնելու հրատարակութիւնը պարտաւորեցնել խմբագրութեանը հասցնել համարները ցնդուրային մասնաժողովին լրագրի գուրս գալու նախկին գիշերվայ մինչև 11 ժամը: Հիմնվում է բարձրագոյն մասնաժողով ներքին գործերի, ժողովրդական լուսաւորութեան, արդարութեան մինիստրներից և արքայան սինօդի օբեր-պրօկուրօրից, որ կը քննէ առաջարկութիւնը հրատարակութեան դադարման մասին, որ այժմ սենատն է անում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 94 ռ. 62½ Կ., երկրորդ 90 ռ. 80 Կ., երրորդ 91 ռ., չորրորդ 89 ռ. 75½ Կ., հինգերորդ 90 ռ. 12 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 214 ռ. 75 Կ., երկրորդ 213 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 89 ռ. 75 Կ., երկրորդ 89 ռ. 75 Կ., երրորդ 89 ռ. 75 Կ., ոսկի 8 ռ. 24 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24,09 պէնս,

Ամստերդամի վրա արժէ 122,25 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 75 պֆ., ֆարիդի վրա արժէ 253 ֆրանկ 75 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը բարեյաջող է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԼԻԻԶԱՐՈՎԻ ԵՒ ԶԱԳՈՒՄԵՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ մէջ (Սաղօվայա փողոց № 38) բացվում է 4-րդ դասաւորում և մի բաժին փողերի համար: Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից է սկսվելու: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ պրանով յայտնում է, որ ներկայ օգոստոսի 18-ին առաւօտեան 12 ժամին վարչութեան ներկայութեամբ կը լինի աճուրդ կապալով տալու համար քաղաքային տեղերը փայտէ շինութիւններով նրանց մէջ հանքային արհեստական ջրեր ծախելու համար հետեւեալ կէտերում: Գօրծինսկի հրապարակի վրա Գիմնազիական փողոցի մօտ 1, Բէյտեւրի տան մօտ 1, Անտօնովի տան մօտ 1, Բիստային կայարանի մօտ 1, Ալեքսանդրեան այգու մօտ կազմենայա պալատային հանդէպ 1, Երեւանեան հրապարակի վրա 3, և Հաւաքարի հրապարակի վրա 1, ընդամենը 9 տեղ շինութիւններով: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամէն օր մինչև օրվայ մէկ ժամը: 3—3

ԹԵՑ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՈՆԳՈ թէյ 1 ռ.—1 ռ. 20 Կ., պատուական ՄԱՆՅԱ թէյ 1 ռ. 40 Կ., հիանալի ՄՈՆԻԿ թէյ 1 ռ. 60 Կ. այս թէյ ամէն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 Կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՆԻ թէյ 1 ռ. 80 Կ. և ամենալաւ Ֆուլ-Լու-Ֆու թէյ 2 ռ. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՃԱԿԱՆՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻԶՆԵՐ աճուրդ Անդրկովկասի համար, շօկուր ֆրայ, Շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԳԱՌԻ, ԲԵՎԵՐՆԵՐ ՎԵՐԼԻ, ՌԱՄԲԵՐ Բարնբերի, Կոլմանի նըշըշայ, ԱԲՍՏՆԵՐ Շվարցի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՑՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100: 24—100

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստութիւնները հոգացող Կարգադրիչ Յանձնաժողովը խնդրում է այն պարոններին, որոնք որ և է ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ցանկանում են ստանալ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ կամ հաղորդել նորան, որ բարեհաճեն ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ նրա ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՑՈՒՄ № 170: Գրասենեակը բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև 11 ժամը:

КЕЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭСSENция.
11—50

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ անդամակցութեան համար ցանկացողները կարող են ստանալ Ուսուցչական ժողովի ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ, որ գտնվում է ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՑՈՒՄ № 170. ՏՈՄՍԱԿԻ գինը 2 ռուբլ է:

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն
ՊՐՕԳՆՄԱԶՆԱԿԱՆ ԿՈՒՐՍՈՎ
(Վէլիամինեան փողոց, իշխան Ամատունու տանը)
Բացվում են I և II պրօգրիմազիական դասաւորում պանսիօնով: Ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի մէկից: Դասաւորութեան համար հրաւիրված են բացառապէս ԳԻՄՆԱԶԻՆԻ ՈՒՍՈՒՑԻՆԵՐԻ:
3—8

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԵԿԻՑ
L'ORIENTAL
ՖԱՆԱՍԵՐԵՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:
«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:
«L'Oriental» թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:
Գրվել կարելի է «ՄԵՍԿԱ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիեննայում գիմելով հետեւալ հասարակ հասցեով: Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Մ Ի Ջ Ի փողոց, Կաթօլիչեւկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՐՆԵՐ 8—30 ռ., չամադաններ 250—25 ռ., սակօյաժներ 1. 30—12 ռ., սոսն դոսկներ ձանապարհի 6—35 ռ., մարաններ (погребы) 6—25 ռ., սամօվարներ 60 Կ.—1.25 ֆունտը, կուխնների պղնձե ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ, ումի վալի կներ մրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լույանի 6—32 ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոններ (գոլաններ) ընթացիկ, սիգար Ռէնգարդի ֆարիկից. պապիլոս և թամբաքու Կուշնարովի գրիզի պապիլոսի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (տոխար չայու և կաֆէի) Լինէմի. Կոֆէ Լինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 Կ. հայկիներ ամենայն տեսակ 28 Կ.—240 ռ., պրօբկայ գինեղաւանների, հանքային և դարեւրի (для зельтерских водъ и пива) զոյթուկ (пучк), պաղնոններ սամվարի և չայու, դանակ չանդալ զանազան ֆարիկաների 1 ռ. 20 Կ.—25 ռ. դոսիներ, զրչակոթներ 1 ռ. 80 Կ.—5—60 Կ. զանակ ջրի 1—60 Կ.—12 ռ., դանակ հացի 20 Կ.—1 ռ., հատր, կուխնների 1—40 մինչև 3—20 Կ. պրիօր. միս կարելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանիկ չայիկներ, կաֆէի-նիկներ ամենայն տեսակի, ջաղացներ կաֆէի համար, ֆրիտեր—Չուր մաքրելու, կրակմալ կարթիկէն 18 Կ., վաքս ֆրանսիայի ծաղի, թուղթ փշտի, կանկրտներ, սուրճուչ, մատիտ, գրիչ երկաթէ, զրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեպապիկներ, գրչակներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի և բրիտանիկ դոսիներ 1—50 Կ. մինչև 12 ռ., և չայու 45 Կ.—5 ռ., չուսիկէք 45 Կ.—5 ռ., շամազաններ ամեն տեսակ 25 Կ.—12 ռ. ջուխտ, պոլսապոլաններ վարչակու, Ռեզինի ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլթաններ կանանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գոտիկներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրեկի և չոբի. սանդղեր շիրմայու ոսկրէ, գուտապիկներ և փայտէ, չուխներ գլխի, շոբի, սապիկի, պոլի և կարտի համար. չուլթի թէյ (сумага) մատիկի կօժի և շալէ (гарусъ) ֆէլչատիէք մարդկերանց և կանանց, պորտամաններ, քիսաներ, պապիլոսի ամաններ և մանր գոյանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտաղէտ ջրեր, պուրբա, Գլիցերին ջրի քացալ, հոտաղէտ պարաշոններ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻԿԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈԼՈՍԵՆՆԻ պահեստում: (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են գիմել հետեւեալ հասցեով: Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.
115—180

Մ Ի Ջ Ի փողոց, Կաթօլիչեւկայա փողոցի անկիւն № 13.